



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՅ
ՐԻՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Յ.Յ.Դ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ
 ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ**

Նախօրօք ճշդուած ժամադրութեամբ մը, Երեքշաբթի, 28 Նոյեմբերի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Յ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական Կոմիտէն ներկայացնող պատուիրակութեան մը, զոր կը գլխաւորէր Տիար Աւետիք Իզմիրլեան եւ որուն մաս կը կազմէին Տեարք Ժան Գոսաքեան, Արթօ Զեօլեան եւ Գրիգոր Աչըզեան:

Հանդիպումը տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի առժամեայ գրասենեակին մէջ, Էւսիսօ: Այցելութիւնը տեղի կ'ունենար Կեդրոնական Կոմիտէի նոր կազմի ընտրութեան լոյսին տակ:

Փոխադարձ ծանօթացումէ ետք, հիւր պատուիրակութիւնը Առաջնորդ Սրբազանին տեղեկութիւններ փոխանցեց կազմակերպութեան աշխատանքներուն ընդհանուր շրջագիծին մասին, որոնք նկատի ունին գլխաւորաբար Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանը: Առաջնորդ Սրբազանը, իր կարգին, Յ.Յ.Դ. ներկայացուցիչներուն հաղորդեց Ազգային Առաջնորդարանի անմիջական ու հեռակայ ծրագիրները: Ան յատուկ գոհունակութեամբ անդրադարձաւ այն իրողութեան, որ Ազգային Առաջնորդարանի նոր շէնքի բարեփոխման աշխատանքները հասած են իրենց լրումին եւ կարելի պիտի ըլլայ Առաջնորդարանի գրասենեակները ի մօտոյ վերադարձնել մայր հաստատութիւն, ինչ որ պիտի ստեղծէ աշխատանքային աւելի նպաստաւոր պայմաններ եւ ընդարձակման կարելիութիւններ:

Խորհրդակցութեան սիւթ եղան մեր գաղութի հիմնահարցերը, որոնց ստեղծած հրամայականները լայն գործակցութեան առիթներ կը ստեղծեն ոչ միայն կազմակերպութեան ու Ազգ. Առաջնորդարանին, այլ նաեւ հայկական այս օճախը կազմող բոլոր միաւորներուն միջեւ: Շեշտուեցաւ միասնականութեան ու բոլոր շրջանակներուն միջեւ համերաշխ եւ ներդաշնակ գործակցութեան կարելիութիւնը: Նաեւ վերահաստատուեցաւ արդիւնաւոր գործակցութիւնը շարունակելու եւ աւելի եւս ծաւալելու պատրաստակամութիւնը:

Հանդիպումին վերջին բաժինին միացան Ազգային Վարչութեան անդամները: Մտերմիկ գրոյցի աւարտին, Առաջնորդ Սրբազանը խորհրդանշական նուէրներով բարի երթ մաղթեց նորընտիր Կեդրոնական Կոմիտէի աշխատանքներուն:

THE PRELATE RECEIVES THE REPRESENTATIVES OF THE ARF CENTRAL COMMITTEE

On Tuesday, November 28, a delegation representing the ARF Central Committee visited the offices of the Western Prelacy and was welcomed by His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate. The delegation consisted of Mr. Avedik Izmirlian, Mr. John Kossakian, Mr. Arto Keoleyan and Mr. Krikor Achekian.

The discussion covered matters and concerns of mutual interest to the Armenian community. The guest delegation briefed the Prelate about the endeavors and plans of the Central Committee that require the cooperation of the Prelacy and members of the Armenian community in the Western United States. On his part the Prelate related to the guests that the renovation of the Prelacy New Building is almost complete and the relocation is planned for the next few weeks.

Later on, members of the Prelacy Executive Council joined the meeting and the discussions continued in an amicable atmosphere. The need to enhance and expand cooperation was stressed upon. At the conclusion of the meeting, the Prelate wished success to the newly elected Central Committee and presented the guests with mementos.